«ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայ-իտալական բարեկամության օրերի շրջանակներում ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում հոկտեմբերի 7-ին և 8-ին իր նիստերը գումարեց «Վենետիկյան ընթերցումներ» երկօրյա միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին շուրջ 30 հայագետներ Հայաստանից և Իտալիայից:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Արման Կիրակոսյանը: *Նա գիտաժողովը գնահատեց որպես երկու ժողովուրդների ոչ միայն անցյալում ունեցած կապերի, այլև այսօր զարգացող հարաբերությունների լավագույն վկայություն: Հայ-իտալական հարաբերությունների ձևավորման և ամրապնդման գործում փոխնախարարն առանձնապես կարևորեց Իտալիայի հայկական համայնքի, մասնավորապես Մխիթարյան միաբանության հայրերի գործունեությունը:*

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին և հյուրերին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը նշեց, որ Իտալիան դարեր շարունակ հոգատարությամբ է շրջապատել իր տարածքում ապրող մեր հայրենակիցներին: Պատահական չէ, որ Մխիթար Աբբաստացին հենց Իտալիայում՝ Վենետիկում հիմնեց Մխիթարյան միաբանությունը, որն արդեն շուրջ երեք դար շարունակ օտար երկնքի տակ իր ծանրակշիռ նպաստն է բերում հայրենական մշակույթի զարգացմանը: Մխիթարյանների Մուրադ-Ռափայելյան վարժարանում կրթվեցին հայ մշակույթի երախտավորներ Թովմաս Թերզյանը, Դանիել Վարուժանը, Վահրամ Փափազյանը, Էդգար Մանասը և ուրիշներ: Հայ-իտալական բարեկամության օրերի շրջանակներում նախատեսվող միջոցառումները, շարունակեց ԳԱԱ նախագահը, անշուշտ, կնպաստեն եղբայրական ժողովուրդների մերձեցմանը, նրանց միջև բարեկամության սերտացմանը, դարերի խորքից սկիզբ առած պատմամշակութային առնչությունների շարունակմանը և խորացմանը: Այս համատեքստում դժվար է գերագնահատել հայ-իտալական պատմամշակութային առնչություններին նվիրված «Վենետիկյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նշանակությունը, քանի որ հայ-իտալական գիտական կապերն ունեն հարուստ ավանդույթներ: Հայ մշակույթի ուսումնասիրման գործում հայ-իտալական գիտական համագործակցության նվաճումներն արձանագրվեցին հայ արվեստին նվիրված միջազգային 5 սիմպոզիումներում, որոնցից երեքը 1975, 1981 և 1988 թթ. գումարվեցին Իտալիայում: Իտալիայում են կազմավորվել հայ արվեստի ու ճարտարապետության ուսումնասիրման 2 խոշոր կենտրոնները: Ադրիանո Ալպագո Նովելլոյի գիտական ղեկավարությամբ Միլանում ստեղծվեց «Հայ մշակույթի ուսումնասիրման և վավերագրման կենտրոնը», որը հետագայում տեղափոխվեց Վենետիկ: Իսկ Պաոլո Կունեոն Հռոմում հիմնեց «Հայկական

միջնադարյան ճարտարապետության կենտրոնը»: Իտալիայում 1967-ին հիմնադրվեց «Հայկական ճարտարապետության վավերագրեր» մատենաշարը, որի 23 հատորների աշխատանքներում ներգրավվեցին լավագույն մասնագետներ տարբեր երկրներից:

Ֆ. Սարգսյանը նշեց, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան բարձր է գնահատել Իտալիայի երկնքի տակ գործող հայագետ-գիտնականների վաստակը: Այպագո Նովկլոն և Գաբրիելլա Ուլուհոջյանն արժանացել են Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր դոկտորի, իսկ Ջանկարլո Բոլոնիեզին, Պաոլո Կունեոն և հայր Պողոս Լևոն Զեքիյանը՝ արտասահմանյան անդամի կոչման:

Հավարտ խոսքի, ԳԱԱ պրեզիդենտը հույս հայտնեց, որ հայ-իտալական միջազգային գիտաժողովը կդառնա ավանդական, հայ և իտալացի հայագետների համագործակցությունը կշարունակվի նաև հետագայում՝ դառնալով առավել բազմակողմանի և արդյունավետ: Ֆ. Սարգսյանը շնորհավորեց գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին, գիտաժողովին մաղթեց բեղուն աշխատանք, ուշագրավ զեկուցումներ, հետաքրքիր քննարկումներ և աշխույժ բանավեճեր:

Մխիթարյան միաբանության աբբահայր Եղիա վարդապետ Քիլբաղյանը ես ողջունեց հայ-իտալական հարաբերությունների խորացման այս հնարավորությունը: Խոսելով Վենետիկում 1987-ին կազմակերպված ցուցահանդեսի մասին, աբբահայրն իր ափսոսանքը հայտնեց, որ չիրականացավ 1988-ին Հայաստանում նախատեսված իտալական օրերի անցկացումը, և բարեկամության այս օրերը, ըստ էության, 1987 թ. Վենետիկյան միջոցառման այդքան սպասված պատասխանն են: Նա արձանագրեց, որ այլ ազգերին հնարավոր կլինի հարգել միայն սեփական պատմությունը ճանաչելով, ինքնությունը պահպանելով:

Լիագումար նիստում (նիստի նախագահ՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյան) առաջինը ՀՀ ԱԳՆ եվրոպական ինտեգրացման հարցերով խորհրդական, դեսպան Աշոտ Ոսկանյանի «Հայաստանի երկար ճանապարհը դեպի Եվրոպա» զեկուցումն էր: Անդրադառնալով Հայաստանի և եվրոպական պետությունների հարաբերություններին, բանախոսն ընդգծեց, որ դրանք նորություն չեն, այլ եղել են գարեր շարունակ, և հայ ժողովուրդն աշխարհի վաղ գլոբալացման գործընթացում իր կարևոր դերն է ունեցել: Առավել կարևորը արժեքների որդեգրման, մշակութային, կենցաղային գործոններն են:

Հայ-իտալական պատմամշակութային կապերի մասին հանգամանալից զեկուցումով հանդես եկավ Վենետիկի Կա Ֆոսկար համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Պողոս Լևոն Զեքիյանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանի «Հայ-իտալական գեղարվեստական առնչությունները» զեկուցման մեջ խոսքը հիմնականում ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության, թատրոնի, գեղարվեստական մշակույթի այլ ասպարեզներում հայերի և իտալացիների միջև վաղ միջնադարում սկիզբ առած ու այսօր էլ շարունակաբար զարգացող փոխադարձ շփումների մասին էր: Բանախոսը բերեց

փաստեր ու տեղեկություններ, հիշատակեց արվեստագետների և մշակութային գործիչների անուններ, որոնցից շատերը հայտնի են միայն մասնագետների նեղ շրջաններում կամ մոռացված են ու անհայտ: Բավական է հիշատակել XVIII դ. Վենետիկում հանդես եկած հայազգի գրող, թատերգակ Զաքարիա Շահրիմանյանի, Իտալիայում ապրած և ստեղծագործած նկարիչ Ասլան Ապրոյանի, բանաստեղծուհի Վիտորիա Աղանուրի, բանաստեղծ Հրանտ Նազարյանցի կամ 1873-ին Թիֆլիսում հիմնադրված՝ Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության նկարչական դպրոցի առաջին տնօրեն իտալացի Լուիջի Պրեմացիի, 1898-ին Թիֆլիսի հայկական գերեզմանոցում Րաֆֆու մահարձանը կերտած իտալացի քանդակագործ Անջելո Անդրեոլետիի և այլոց անունները: Ա. Աղասյանի բանախոսության մեջ արտացոլվեցին նաև իտալացի, հայ և այլազգի արվեստագետներ Լ. դա Վինչիի, Ջ. Բայրոնի, Հ. Այվազովսկու, Տ. Զուխաճյանի, Ալ. Սկարլատիի, Գ. Դոնիցետտիի, Կոմիտասի, Ավ. Իսահակյանի, Մ. Սարյանի, Վ. Փափազյանի, Ա. Խաչատրյանի և այլոց ստեղծագործական կենսագրության հետ կապված հիշարժան փաստեր ու վկայություններ, որոնք առանձնակի արժեք ու հետաքրքրություն, կշիռ ու որակ են տալիս հայ-իտալական գեղարվեստական առնչությունների բաղմադարյան պատմությանը:

Այնուհետև դիտաժողովն իր աշխատանքը ծավալեց երկու մասնաճյուղերի նիստերում: «Մխիթարյան միաբանությունը և Վենետիկը» մասնաճյուղն իր նիստերը դումարեց հոկտեմբերի 7-ին, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի գահլիճում: Երկու նիստերի ընթացքում լսվեց 5 զեկուցում:

Մասնաճյուղի առաջին նիստը (նախագահ՝ Պողոս Լևոն Զեքիյան) բացվեց Մխիթարյան միաբանության հայր Հարություն Պզտիկյանի «Մխիթարյանների մշակութային վաստակը» բանախոսությամբ: Մխիթարյանների բանասիրական ծանրակշիռ վաստակի մանրամասն քննությամբ հանդես եկավ Բոլոնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Գաբրիելլա Ուլուհոջյանը (Իտալիա): Իսկ Հայ օգնության ֆոնդի մամլո քարտուղար Լևոն Լաճիկյանը ներկայացրեց Մխիթարյան միաբանության հենց Վենետիկում հաստատվելու հիմնական պատճառներն ու նախադրյալները:

Մասնաճյուղի երկրորդ նիստում (նախագահ՝ Հ. Հարություն Պզտիկյան) ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր Հենրիկ Հովհաննիսյանն անդրադարձավ Վահրամ Փափազյանի՝ Միլանի Արվեստների ակադեմիայում ստացած մասնագիտական կրթությանը, XIX դարավերջի և XX դարասկզբի իտալական բեմի վարպետների հետ նրա շփումներին և արվեստի սկզբունքին, այսինքն՝ զգացմունքների տրամաբանություն և ոչ թե խոսքերի: ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայ արվեստի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր Լևոն Զուգասզյանի «Լեոնարդո դա Վինչիի մի նախադասության շուրջ» բանախոսությունը վաղ և հասուն Վերածնության շրջանում իտալացի նկարիչների, այդ թվում՝ Լեոնարդո դա Վինչիի կողմից այսպես կոչված «հայկական կավի» դործածման մասին էր:

«Հայերն ու Իտալիան. մշակույթ և արվեստ» մասնաճյուղի նստաշրջանի երեք նիստերում, որոնք գումարվեցին հոկտեմբերի 8-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում, լսվեց 17 զեկուցում:

Մասնաճյուղի առաջին նիստում (նախագահ՝ Լևոն Զուգասզյան) ընթերցված առաջին բանախոսության մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանը ներկայացրեց իտալացի գիտնականների կողմից հայ միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության պատմությունը: Ճարտարապետության մեջ հայ-իտալական փոխառնչությունները բացահայտեց ճարտարապետության դոկտոր Դավիթ Քերթմենջյանը: Կլոր հատակագծային լուծումներով բնակելի տների միջև իտալա-հայկական դուգահեռների բացահայտմանն էր նվիրված Հայաստանի ճարտարապետության թանգարանի տնօրեն Աշոտ Գրիգորյանի զեկուցումը: Հայ-իտալական առնչություններում Զարյանների ծանրակշիռ ներդրումն էր ներկայացված առաջին նիստը եզրափակող Արա Զարյանի (Իտալիա) զեկուցման մեջ:

Երկրորդ նիստում (նախագահ՝ Գաբրիելլա Ուլուհոջյան) առաջինն ընթերցվեց Ալդո Ֆեռարիի (Իտալիա) «Յան Պոտոցկին և Հայաստանի ազատագրման ծրագիրը» վերնագրով զեկուցումը: Սոնա Հարությունյանը (Իտալիա) անդրադարձավ Մխիթարյանների թարգմանչական գործունեությանը՝ արժեքավորելով Դանտեի հայերեն թարգմանությունները: Երրորդ բանախոսը՝ Լիլիթ Մելիքյանը, ներկայացրեց Վենետիկում ապրած և ստեղծագործած հայազգի բանաստեղծուհի, եվրոպական ճանաչման արժանացած Վիտորիա Աղանուրի կյանքն ու ստեղծագործական հարուստ գործունեությունը: Երկրորդ նիստը եզրափակեց Յուրի Խաչատրյանի զեկուցումը նվիրված ականավոր հայորդիներ, տաղանդավոր գրող Կոստան Զարյանի և բանաստեղծ Հրանտ Նազարյանի կյանքին ու գործունեությանը:

Երրորդ նիստը (նախագահ՝ Արարատ Աղասյան) սկսվեց արվեստագիտության դոկտոր Էմմա Կորխմազյանի բանախոսությամբ նվիրված Իտալիայում նկարազարդված, ներկայումս Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հայկական ձեռագրերին: Իտալիայի տարբեր քաղաքներում ապրող և ստեղծագործող հայ մանրանկարիչները, պահպանելով ազգային ավանդույթները, որոշ չափով ընկալել են նաև իրենց նոր միջավայրի արվեստի որոշ առանձնահատկությունները, որոնք բացահայտեց բանախոսը: Նոր Ջուղայի XVII–XVIII դդ. գեղանկարչության մեջ իտալական և եվրոպական Վերածնության արձագանքներին էր նվիրված արվեստագիտության դոկտոր Հրավարդ Հակոբյանի բանախոսությունը: Հաջորդը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող Սեյրանուշ Մանուկյանի «Տաթևի որմնանկարները և արևմտաքրիստոնեական վաղ միջնադարյան արվեստը» զեկուցումն էր: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող Գարեգին Քոթանջյանը ներկայացրեց Հովհաննես Այվազովսկու՝ Իտալիայում անցկացրած տարիների ստեղծագործությունը: Նիստը եզրափակվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու Անուշ Տեր-Մինասյանի «Հայ քանդակա-

գործների մասնակցությունը Ռավեննայում անցկացվող Դանտեական բիենալեներին» բանախոսությամբ:

Նստաշրջանի եզրափակիչ չորրորդ նիստում (նախագահ՝ Մինաս Լուրյան), առաջինը Գաբրիելլա Ուլուհոջյանի զեկուցումն էր՝ Հայ եկեղեցիների և սրբատեղերի վերաբերյալ XVII դ. մի կորսված խիստ արժեքավոր քարտեզի պատմության մասին: «Հայկական թեմատիկան իտալական օպերային դրականության մեջ» բանախոսությամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր Աննա Արևշատյանը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության թեկնածու Աննա Ասատրյանը «Տիգրան Զուխաճյան-Il Verdi Armeno» զեկուցման մեջ բացահայտեց Վերդիի և Զուխաճյանի կյանքի և ստեղծագործության որոշ ընդհանրություններ, Զուխաճյանի օպերային դրամատուրգիայի առանձնահատկությունները «Արշակ Բ» օպերայի օրինակով: Նիստն իր աշխատանքը եզրափակեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Մհեր Նավոյանի «Հայ հոգևոր երգի մխիթարյան երգվածքի մի քանի բնութագրերի շուրջ» զեկուցումով, որն առնչվում էր շարականագիտության մխիթարյան ավանդույթի որոշ բնութագրերին:

Այսպիսով, 17-ամյա գագարից հետո վերստին աշխուժացավ հայ-իտալական երբեմնի արգասաբեր ու բազմաբեղուն համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Իտալիո հայագետների միջև:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ